ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 16 >> ապրիլի 2013թվականի N 40 -Ա

ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 1 ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՎ ՎԱՎԵՐԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված Պատմական միջավայրի պահպանության Շիրակի մարզային ծառայության պետ Ա.Մելիք-Սարգսյանի 2012թվականի նոյեմբերի 26-ի N 1-50 գրությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ պարբերություններով, Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N 168-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 96-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին հանձնարարել իր կազմից ձևավորել ժամանակավոր հանձնաժողով՝ Գյումրու թիվ 1 գերեզմանոցում հուշարձանների հետ կապված իրադրության ուսումնասիրման համար: Հանձնաժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավել կամավորներ Գյումրու մտավորականներից, ոլորտի մասնագետներից, հասարակական գործիչներից: Հանձնաժողովի ձևավորման վերջնաժամկետ սահմանել սույն որոշման ընդունումից հաշված՝ 10-րդ օրը:
2. Ժամանակավոր հանձնաժողովին հանձնարարել՝ ուսումնասիրություն կատարել Գյումրիի թիվ 1 գերեզմանոցի տարածքում, պարզել այդ գերեզմանոցում գտնվող վտանգված գերեզմանները, փաստագրել ու վավերագրել դրանք, պարզել վտանգվածության, վնասվածության և ոչնչացման ծավալները:
3. Սահմանել Գյումրու թիվ 1 գերեզմանոցի տարածքում թաղված նշանավոր մարդկանց գերեզմանների մոտ տեղադրվելիք տեղեկատու ցուցանակների ցանկը:
4. Կատարված աշխատանքների մասին զեկուցել Գյումրու ավագանու նիստում:
5. Վերոհիշյալ աշխատանքների համար սահմանել եռամսյա ժամկետ՝ հաշված ժամանակավոր հանձնաժողովի ստեղծման պահից:

Կողմ (18) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Գ.Ադամյան_____

Ա.Բաղեյան_____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Ե.Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ.Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ